ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հուլիսի 2025թ. թիվ 331-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի ԹԻՎ 333-Ա
ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025թ. հուլիսի 3-ի թիվ 884-Ն որոշումը և թիվ ՎԴ6/0145/05/21 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.05.2025թ. որոշումը, ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2023 թվականի մայիսի 5-ին կայացված որոշման՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Անվավեր ճանաչել Լոռու մարզպետի 2021 թվականի հուլիսի 2-ի «Վ.Խաչատրյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու և պաշտոնից ազատելու մասին» թիվ 333-Ա որոշումը:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝

1) Վալերի Խաչատրյանին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարել միջին աշխատավարձը հարկադիր պարապուրդի ամբողջ՝ 2021թ. հուլիսի 2-ից մինչև 2022թ. ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածի համար: Վալերի Խաչատրյանի միջին ամսական աշխատավարձը կազմել է 597116 դրամ, ընդհանուր հարկադիր պարապուրդի գումարը վերը նշված ժամանակաշրջանի համար կազմում է 5743687 դրամ:

2) Վ.Խաչատրյանին վճարել 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վարձատրության վճար:

3) Վ.Խաչատրյանին վճարվող գումարները փոխանցել 220053185082000 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Recoverable Signature

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Signed by: AVETISYAN HOVHANNES 3905890216 Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. հուլիսի 8
ք.Վանաձոր